ՎԱՐԴԱՆԱՆՔ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

Ուսուցիչների պարտադիր վերապատրաստում

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Գարեգին Նժդեհ

Ուսուցիչ՝ Մերի Ղանդիլյան

Ղեկավար՝ Նունե Ասրյան

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն..... 3
Կյանքը և գործունեությունը..... 5
Գարեգին Նժդեհի դերը Մեծ Ղարաքիլիսայի հերոսամարտում..... 9
Պայքար Զանգեզուրի համար 1920-1921թթ. 11
Նժդեհի խոհերից 21
Եզրակացություն 22
Օգտագործված գրականության ցանկ..... 24

Ներածություն

Հայոց պատմությունը մեզ մի հատիկ բան է սովորեցնում,

այն, որ հայն իր պատմությունից բնավ չի սովորում:

Գ. Նժդեհ

Ուզում եմ ներկայացնել հայ մեծանուն զորավար, Լեռնահայաստանի սպարապետ, հրապարակախոս, պետական գործիչ և ազգային մտքի ռահվիրա Գարեգին Նժդեհին:

Այս աշխատանքի մեջ հանգամանալից կերպով վեր են հանվում «Գարեգին Նժդեհի ուսմունքը և դրա արդիականությունը»:

Ինչպես ամեն ճշմարիտ առաջնորդ Նժդեհը մշտապես գտնվել է իր ժողովրդի կողքին: Երբ Ղարաքիլիսայում (այժ Վանաձոր) զինվորական ղեկավարության շրջանում իշխում էին խուճապային տրամադրությունները, իսկ հուսահատված զինվորները բռնել էին նահանջի ճանապարհը, Նժդեհը հանդիսացավ այն ոգևորիչ ուժը, որն իր հմայիչ խոսքով առաջնորդեց բարոյալքված բանակը դեպի ճակատ, դեպի ազատություն և հաղթանակ:

Նժդեհի ռազմական, կազմակերպչական, մարտավարական բարձր կարողություններն արտահայտվեցին դեռ Բալկանյան պատերազմի տարիներին, որտեղ նա Զորավար Անդրանիկի հետ , Բուլղարական բանակի կողքին, ղեկավարում էր հայկական կամավորական ջոկատը: Սակայն պետք է խոստովանել, որ նժդեհի ռազմական բացառիկ տաղանդը իր ամբողջ փայլով դրսևորվեց Սյունիքի ինքնապաշտպանական մարտերի ժամանակ: Սխալված չենք լինի, եթե ասենք՝ չլիներ Նժդեհի և նրա հերոս զինվորների սխրագործությունը Սյունիքում, չէր լինի նայև հայկական այդ երկրամասը մերօրյա Հայաստանի Հանրապետության գոյությունն ընդհանրապես, թեկուզ որպես խորհրդային հանրապետություն:

Հայրենիքին և հայությանը անմնացորդ նվիրվածությամբ Նժդեհը շառայեց նաև գտնվելով տարագրության մեջ:

Դյունիքում շարունակեց իր հայապահպան գործունեությունն արդեն քարոզչական ճակատում՝ ճանապարհ բանալով հայ նորահաս սերունդն ուրացումից, անվերահաս ձուլումից փրկելու և հայրենասեր դարձնելու համար:

Ահա հենց այդ հիմնախնդիրների լուծմանն էին միտված անցյալ դարի 30-ական թվականին նրա կողմից նախատեսված Ցեղակրոն շարժումը և գաղափարախոսությունը:

Երբ բռնկվեց երկրորդ համաշխարհային պատերազմը՝ Նժդեհը չմնաց կրավորական դիտորդի դերում և իր ձեռքը վերցրեց գերմանական բանակի գրաված տարածքներում բնակվող հայության փրկության գործը:

Նույնիսկ բանտում Նժդեհը փորձում էր ուղիներ փնտրել Հայրենիքին ծառայելու համար:

Խոսելով Նժդեհի կերպարի և նրա հերոսական կյանքի մասին՝ համոզվում ես նրան իր գաղափարակից Հայկ Սարյանի կողմից տրված բնութագրին.«Մենք գործ ունենք փոթորկալից անցյալի տեր մի անհատի, հայկական չափանիշներով վերցրած պատմական մի անձնավորության հետ[1]»:

Գարեգին Նժդեհի ապրած կյանքն ու թողած տեսական ժառանգությունը իրենց խորհրդով մի շտեմարան են մեր սերնդի հայեցի դաստիարակության, նրա՝ Հայրենիքին նվիրվելու և ծառայելու համար:

[1] Վարդան Աթոյան (ՀՀԿ երիտասարդական կազմակերպություն, Երևան 2009թ.)

Կյանքը և գործունեությունը

Գարեգին Նժդեհ (ի ծնե՝ Գարեգին Տեր-Հարությունյան կամ Գարեգին Առաքել Եղիշեի Տեր-Հարությունյան) ծնվել է 1886թ.հունվարի 1-ին, Ռուսական կայսրությունում՝ Երևանի նահանգի Նախիջևանի գավառի Կզնուտ (այժմ Գյուզնութ) գյուղում:

Մանուկ հասակում կորցրել է հորը (հայրը Եղիշեն գյուղի քահանան էր) և մնացել մոր Տիրուհու խնամքին: Ընտանիքում եղել են 4 երեխա, Նժդեհը փոքրն էր: Սկզբնական կրթությունը ստանալով տեղի ծխական հայկական դպրոցում, իսկ այն փակվելուց հետո Նախիջևան քաղաքի ռուսական դպրոցում՝ ուսումը շարունակում է Թիֆլիսի ռուսական գիմնաստիկայում, որտեղ սովորելուընթացքում էլ 17 տարեկան հասակից միանում է հայ ազատագրական շարժմանը: Հայոց հեղափոխական շարժմանը միացել է 17 տարեկանից իբրև գիմնազիստ: Հետագայում լքել է համալսարանը և գործել ցարիզմի ու սուլթանականության դեմ: 1906թ.անցել է Բուլղարիա և Մակեդոնական ազատագրական շարժման ղեկավարներ Բորիս Սարաֆովի և Լիապով Գուրինի միջնորդությամբ ընդունվել Սոֆիայի սպայական դպրոց՝ Դիմիտրի Նիկոլովի անունով: Ավարտելով դպրոցը (I կարգ)՝ վերադարձել է Կովկաս՝ Մուրադի Հայդուկային խմբի հետ Հայաստան անցնելու համար: Այնուհետև գործել է Պարսկաստանում: 1909թ-ին վերադարձել է Կովկաս և ձերբակալվել է: Բանտերում՝ Ջուլֆայից մինչև Պետերբուրգ, մնացել է ավելի քան 3 տարի, 163 դաշնակցականների ծանոթ դատավարությունից հետո Սիբիր չընկնելու համար անցել է Բուլղարիա[2]:

1912թ. հայ կամավորներից կազմակերպել էմի վաշտ և Անդրանիկի հետ մասնակցել Բալկանյան պատերազմին: Այստեղ վիրավորվում է և ստանում քաջության խաչ:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, ներման արժանանալով ցարական կառավարության կողմից, վերադառնում է Կովկաս՝ Թուրքիայի դեմ մղվելիք պատերազմին մասնակցելու պայմանով:

1917թ-ին օգնել է Կողբի բնակիչներին: Հայաստանի անկախության նախօրյակին վարել է Ալաջայի կռիվները և Արփաչայը կտրել-անցել է միայն այն ժամանակ, երբ վերջին նահանջող հայ զինվորի հետ հաջողվեց փոխադրել Անիից պրոֆեսոր Մառի պեղումների արդյունքը հանդիսացող արժեքավոր հնությունները:

1918թ. մայիսի վերջին վարել է Ղարաքիլիսայի ճակատամարտը, որտեղ վիրավորվել է և ներկայացվել ամենաբարձր շքանշանին: Ղարաքիլիսայի եռօրյա հերոսականը փրկեց գլխովին ոչնչացումից արարատյան հայությանը և հիմքը դրեց Հայկական պետության: Հայաստանի անկախության օրոք՝ 1919թ. փրկել է Դավալուի և Վեդիի միջև պաշարված Հայկական II գունդը: 1919թ-ից անցել է Սյունիքի՝ Էդիֆ բեյի զորքերի կողմից պաշարված, այնուհետև անցել Ղափան:

[2] Չխրատվող ժողովուրդ, Գ. Նժդեհ Երևան 2021թ. Վերնատուն, էջ 239

1920թ.-ի կեսերին Դրոյի զորամասի կողմից Ղարաբաղն ու Զանգեղուրը լքելուց հետո, ստանձնել է բովանդակ Սյունիքի ինքնապաշտպանության գործը: Առանց սպայական կադրի և արտաքին որևէ օգնության, քաղաքականապես մենակ, ավելի քան մի տարի տևող անհավասար և հաղթական կռիվներով Սյունիքը, որը Հայաստանի կառավարության և Մոսկվայի ներկայացուցիչ Լեգրանի միջև կնքված պայմանգրով Հանձնված էր Ադրբեջանին, պարտադրում է իր կամքը խորհրդային իշխանությանը. Մյասնիկյանի օրով իր 1921թ-ի հունիսի դեկլարացիայով Սյունիքը համարվում է կցված իր մայր երկրին՝ Հայաստանին:

1921թ. Նժդեհն իր զինակիցներով անցել է Պարսկաստան: Այնտեղ մնալով չորս ամիս նա շուտով հեռացել է Բուլղարիա:

1944թ. սեպտեմբերին խորհրդային բանակի՝ Բուլղարիա մտնելուց հետո՝ հոկտեմբերի 10-ին, Նժդեհը ձեռբակալվել է, նրան տեղափոխել են Բուխարեստ, ապա Մոսկվա, և բանտարկել Լուբյանկայի բանտում: 1946թ-ի նոյեմբերին ուղարկել են Երևան դատապարտել 25 տարվա բանտարկության: 1948թ-ին տեղափոխել են Վլադիմիրի բանտ (Ռուսաստան), որտեղ և վախճանվել է դեկտեմբերի 21-ին ու թաղվել բանտին կից գերեզմանատանը[3]:

1983թ. Նժդեհի աճյունը գաղտնի տեղափոխվել է Երևան, որից մի մասունք ափոփվել է Խուստուփի լանջին 2000թ-ին կանգնեցվել է կիսանդրին, աճյունը 1987թ-ին՝ Սպիտակավոր Սուրբ Աստվածածին վանքի բակում (ՀՀ Վայոց Ձորի մարզի Վերնաշեն գյուղի մոտ):

Առաջին համաշխարհային պատերազմում պարտվելով՝ Թուրքիան զրկվեց դարերի ընթացքում նվաճած բավականաչափ տարածքներից: Այդ ժամանակներից սկսած առ այսօր Թուրքիայի կառավարող շրջանները պանթուրքիզմի մեջ են տեսնում երբեմնի աշխարհածավալ կայսրության վերածննդի հնարավորությունը: Դրան հասնելու համար առաջին հերթին անհրաժեշտ էր, որ Թուրքիան էթնիկ սահման ունենար Այսրկովկասի և Իրանի թյուրքալեզու ժողովուրդների հետ:

Այս խնդիրները լուծելու համար Բարձր դուռը նպատակ էր դրել Արևելյան Այսրկովկասում ձևավորող թուրքական նոր պետություն և երկրորդ՝ վերացնել Թուրքիայի և նոր ստեղծվելիք Ադրբեջանի միջև գոյություն ունեցած «հայկական սեպը»:

1918թ. մայիսի 28-ին «Մուսավաթ» կուսակցությունը նախկին Բաքվին և Էլիզավետակոլի նահանգների տարածքում հաջողվում է Ադրբեջան պետության անկախությունը:

Նորահայտ այդ հանրապետությունը այսպես է բնութագրել ռուդ գեներալ Անտոն Դենիկինը. «Ամեն ինչ ադրբեջանական հանրապետությունում արհեստական էր,- գրել է ռուս գեներալը,- իսկական չէր, սկսած նրա անունից, որը վերցված էր

[3] Գարեգին Նժդեհ Հայկական հանրագիտարան կայքից:

Պարսկաստանի համանուն նահանգներից մեկի անունից: Տարածքը նույնպես արհեստական էր[4]»:

Եվ այսպես, աշխարհի քարտեզի վրա գծվում է մի նոր պետություն, որի հիմքում դրված չէին ոչ պատմականություն, ոչ էլ էթնիկական պատկանելիության սկզբունքները: Նորաթուխ այդ երկիրը սկսեց հավակնել Հայաստանի բաղկացուցիչ մաս հանդիսացող Արցախին ու Զանգեզուրին:

1920թ. մարտին Մուստաֆա Քեմալը մի պատվիրակություն է ուղարկում Ադրբեջան համոզվելու «Մուսավաթ»-ի ղեկավարներին՝ սրտ հարաբերություններ ստեղծել բոլշիկների հետ և անգամ անհրաժեշտության դեպքում խորհրդայնացնել երկիրը: Բանակցությունների արդյունքում 1920թ. ապրիլի 15-ին, Ադրբեջանի խորհրդայնացումից երկու շաբաթ առաջ, Ադրբեջանի զինվորական նախարարի օգնական Ալի աղա Շիխլինսկին և թուրքական 15-րդ բանակի հրամանատար Քյազիմ Կարատեքիր փաշան Էրզրումում:

Նժդեհը քաջ գիտակցում էր, որ առանց Արցախի հայկական պետականության պահպանման անհնար է պահպանել ՀՀ անվտանգությունը:

Այս օրերին Թուրքիայում ծավալվող քեմալական շարժումը նոր մարտահրավեր է դառնում հայության համար: Մուստաֆա Քեմալը ծրագրում էր դեպի Այսրկովկաս ձգվող բոլշևիկների հետ դաշինք ձևավորել և ռազմական գործողություններ սկսել ՀՀ նկատմամբ, նվաճել էր Կարսի շրջանը: Այդ թվում ՀՀ տարբեր գավառներում, մասնավորապես Զանգեզուրում, Վեդի-Բասարում կուտակված մահմեդական զինված ազգաբնակչությունը պետք է ապստամբի, իսկ Ադրբեջանի զինված ուժերը Ղարաբաղը և Զանգեզուրը մաքրեին հայկական զորքից և Արաքսի հովտով նոր կառուցվող Այաթ-Ջուլֆա երկաթգծով կապվեն Էրզրումի հետ[5]:

Ա. Ահարոնյանը 1920թ. մայիսի 13-ին Ազգերի լիգայի խորհրդի նախագահին գրել է. «Ադրբեջանն իրեն հայտարարել է խորհրդային և ՀՀ կառավարությունը վերջնագիր է ներկայացրել՝ պահանջելով իրեն զիջել Ղարաբաղը և Զանգեզուրը: Օրջոնսկին, պաշտպանելով Ադրբեջանին, Երևանի կառավարությանը հաղորդել է, որ Հայաստանի մերժման դեպքում Ռուսաստանը ՀՀ կընկալի որպես իրեն պատերազմ հայտարարած երկիր[6]»:

Խորհրդային կարգերի ճնշման տակ որոշվում են ՀՀ զորքերը դուրս բերել Արցախից և իշխանությունը հանձնել բոլշևիկներին: Նժդեհը վճռում է Դրոյի հետ անընդունելի համարել նմանօրինակ որոշումը:

Նժդեհը գրել է «Ղարաբաղն առանց կռվի թշնամուն թողնելը, անշուշտ, պիտի ունենա իր բարոյալքիչ ազդեցությունը Զանգեզուրի վրա: Կամ թշնամին չափազանց

[4] Վահրամ Ռ. Խալայան Գ. Նժդեհ և Արցախահայ պետականության հարցը, Երևան 2021թ. էջ 35:
[5] Վահրամ Բալայան Գարեգին Նժդեհ Արցախահայության մուսաֆաթական հարցը, Երևան 2021թ. էջ 41
[6] Վահրամ Բալայան Գարեգին Նժդեհ Արցախահայության մուսաֆաթական հարցը, Երևան 2021թ. էջ 43

ուժեղ է, որ երևանյան զորքերը խուսափել են չափելու նրա հետ, կամ ինչ-ինչ քաղաքական նպատակներով չպետք էր կռվել և չեն կռվել մերոնք[7]»:

Նման պայմաններում Ղարաբաղի կառավարությունը արյունահեղությունից և քաղաքացիական պատերազմից խուսափելու համար, գնաց զոհաբերության՝ իշխանությունը հանձնեց բոլշևիկներին: 1920թ. մայիսի 26-ին Թաղավարդում հրավիրված Ղարաբաղի հայության 10-րդ համագումարը, երկրամասը հայտարարում է խորհրդային: Նույն օրը Դրոն և Նժդեհը հեռանում են Արցախից:

1920թ. մայիսին խորհրդայնացումից հետո Արցախը կորցրեց պետակայնացումը, բայց ոչ ըմբոստ ոգին: Երկրամասում չկար քաղաքական մի ուժ, որ կարողանար նոր ոգի ու եռանդ հաղորդեր ազատագրական պայքարին: Դաշնակցականները հեռացել էին Արցախից, մի մասն էլ անցել էին ընդհատակ:

Իրական իշխանություն ունեցող հայ բոլշևիկներն էլ համակերպվել էին ստեղծված իրավիչակին և համաշխարհային հեղափոխության մոլուցքով տարված, դարձել էին Նարիմանովի և մոսկովյան կենտրոնական իշխանությունների կամակատարը:

Նման բարդ և անհասկանալի պայմաններում ազատագրական պայքարի կազմակերպչի դերում հանդես եկավ Գարեգին Նժդեհը: Նա կարճ ժամանակահատվածում ջախջախեց թուրք ասկյարներին և Սյունիքում ստեղծեց ազգային մի իշխանություն, որի իրավասությունները տարածված էին նաև Լեռնային Ղարաբաղի վրա:

Դեռևս 1920թ. մայիսին, կարմիր բանակի դեմ պայքարելու արցախահայության ազատագրական շարժմանը կազմակերպված ընթացք տալու համար, Դրոն Թևան Ստեփանյանին նշանակում է Լեռնային Ղարաբաղում Նժդեհի տեղակալ:

1920թ. աշնանը Կապանում Թևան Ստեփանյանը հանդիպում է Գարեգին Նժդեհի հետ: Սպարապետը լուծում է Արցախում գտնվող զորամիավորումների, հանդերձանքի, զենքի, զինամթերքի և ֆինանսական հարցերը: Սպարապետը խնդիր է դնում Լեռնային Ղարաբաղը միավորել Զանգեզուրի և Հայաստանի հետ:

Ապստամբները կարճժամանակահատվածում ազատագրում են Դիզակը, Վարանդան, Խաչենի զգալի մասը:

Գարեգին Նժդեհը, ականատես լինելով արցախահայության հերոսական հաջողություններին, Արցախն ամբողջապես ազատագրելու նպատակով 1921թ. հունվարին նոր զորամաս է ուղարկում:

1921թ. Երևանում փետրվարին ապստամբության հաջողությունից հետո, Ղարաբաղում արմատական բեկում կատարվեց: Մեկը մյուսի հետևից ազատագրվում էին գյուղերը:

---

[7] Վահրամ Բալայան Գարեգին Նժդեհ Արցախահայության մուսաֆաթական հարցը, Երևան 2021թ. էջ 44

Լենինը գրում է. «Հայաստանի մի մասը, մասնավորապես Ղարաբաղը և Զանգեզուրը, մնում է դաշնակիցների ձեռքին, որոնք կապ ունեն Թավրիզի հետ, որտեղ ապրում են Անտանտի գործակալները[8]»:

Ռազմական հաջողոջություններին զուգահեռ՝ Նժդեհը փորձում է հաջողություններ արձանագրել նաև դիվանագիտական ճակատում:

Գարեգին Նժդեհը քաջ գիտակցում էր, որ մի քանի ճակատով՝ Թուրքիայի, Ադրբեջանի, Խորհրդային Ռուսաստանի դեմ կռվելը անհնար է:

1921թ. փետրվարի 2-ին Գորիսուն Նժդեհը հանդիպում է Խորհրդային Հայաստանի ղեկավարների հետ: Բոլշևիկ գործիչները Նժդեհին հավաստիացնում էին, որ Զանգեզուրն ու Ղարաբաղը Խորհրդային Հայաստանի համար ունեն ռազմավարական նշանակություն:

Խորհրդային ուժերը ամենադաժան մեթոդներով հաշվեհարդար էին տեսնում հայրենասեր գործիչների հետ: Հետագա տարիներին ապստամբության մի մասին պիտակը կպցնելով, կամ գնդակահարում, կամ էլ արգելափակում էին բանտերում:

Արցախահայության հակաադրբեջանական, հակախորհրդային շարժումը ճնայած տխուր վախճան ունեցավ, բայց ազատագրական շարժման գաղափարները կենդանի մնացին ժողովրդի մեջ՝ ստեղծելով նոր բարենպաստ ժամանակների:

Գարեգին Նժդեհի դերը Մեծ Ղարաքիլիսայի հերոսամարտում

Ղարաքիլիսայի ճակատամարտը վերջինն էր մայիսյան հերոսամարտերի շարքում որով և վերջ դրվեց թուրք-հայկական պատերազմին և ստորագրվեց Բաթումի հաշտության պայմանագիրը: Եթե Սարդարապատի և Բաշ-Ապարանի ճակատամարտերով Արարատյան դաշտավայրում ծվարած հայությունը փրկվեց անխուսափելի ոչնչացումից և նպաստավոր պայմաններ ստեղծվեցին հայոց պետականության վերականգման համար, ապա Ղարաքիլիսայի ճակատամարտը, նշվածից բացի, ուներ նաև աշխարհաքաղաքական նշանակության, քանզի դրա հետևանքով որոշ ժամանակով կասեցվեց թուրքական զորքերի առաջխաղացումը դեպի Թիֆլիս ու արևելյան Այսրկովկաս՝ խաթարելով համապատասխան ծրագրերի շուտափույթ ծրագրերի իրականացումը[9]:

Ղարաքիլիսայի ճակատամարտին իր կենսագրականում դիպուկ գնահատական է տվել ճակատամարտին անմիջականորեն մասնակցած և մարտական գործողությունները ղեկավարած Գարեգին Տեր-Հարությունյանը (Նժդեհը) «1918թ. մայիսի վերջին վարել եմ Ղարաքիլիսայի ճակատամարտը: Վիրավորվել եմ:

[8] Վահրամ Բալայան Գարեգին Նժդեհ Արցախահայության մուսաֆաթական հարցը, Երևան 2021թ. էջ 47
[9] Արմեն Մարուքյան Հայոց պատմության հարցեր Երևան 2001թ. էջ 110-111

Ներկայացվել ամենաբարձր քաջության շքանշանի: Պիտի խոստովանել, որ առանց Ղարաքիլիսայի ճակատամարտի ոչ թե Խորհրդային Հայաստանը, այլև այդ երկրամասի վրա այսօր ապրող հայություն չէինք ունենա: Ղարաքիլիսայի եռօրյա հերոսականը փրկեց գլխավորին ոչնչացումից Արարատյան հայությանը և հիմք դրեց Հայկական Պետականությանը[10]»:

Գարեգին Նժդեհը մայիսի 24-ի առավոտյան գնաց զորավար Նազարբեկյանի մոտ՝ խնդրելով, որ թույլ չտա զորքերը լքեն ճակատը, որովհետև ճակատը մերկացնելով վտանգվում էր Երևանը: Ծայրահեղ վիճակում գտնվող Նազարբեկյանը պատասխանում է, որ ինքն այլևս զորք չունի, իսկ զրույցի վերջում նրան ասում է, ինչ կարող եք դուք արեք:

Որոշ ժամանակ անց Արամ Մանուկյանի կողմից լուր են ստանում, որ Սարդարապատում հայերը փառահեղ հաղթանակ են ունեցել, Նժդեհը ոգևորում է և ժողովրդին ու զորքին հավաքում է եկեղեցու բակում:

Մայիսի 24-ի գիշերվանից Ղարաքիլիսայի ճակատամարտի ղեկավարությունը ստանձնած Նժդեհը՝ վերադառնում է Ղարաքիլիսա:

Նժդեհը մտնում է Ղարաքիլիսա, որտեղ մեռելային տրամադրություն էր տիրում, սակայն լույսերի բացակայությունը վկայում էր այն մասին, որ թուրքերը դեռ չեն մտել գյուղ: Տուն չկար, որ սպիտակ դրոշ պարզած չլիներ, իսկ գյուղացիները պատրաստվում էին աղ ու հացոց դիմավորել թշնամուն: Նժդեհը կանխում է այդ անպատվությունը:

Մայիսի 25-ի առավոտյան ժամը 10-ին այդպես էլ չարժանացավ, թշնամու ուժերը շարժվեցին առաջ և հայտնվեցին դարանակալող խմբերի խաչաձև կրակի տակ:

Ղարաքիլիսայի հերոսամարտի շուրջ հետագայում հեռակա բանավեճ ծավալվեց Գարեգին Նժդեհի և զորավար Անդրանիկի միջև, որն իր արձագանքն գտավ Ա. Ահարոնյանի կողմից Բոստոնի «Հայրենիք» ամսագրում: Մեջբերելով Նժդեհի հուշերը Ահարոնյանը նշում է, որ իզուր ազատեցին Անդրանիկին, որն իր զինվորներով դիրքավորվելով կձախողեր թշնամու ծրագիրը:

Զորավարը պատմում է, որ գենեռալ Նազարբեկյանի կողմից իրեն հրաման էր տրվել պաշտպանել երկաթ գիշը, իսկ Նժդեհը հանդիմանում է Անդրանիկին, որ եթե գար կզբաղեցներ բարձունքը:

Նժդեհն, անշուշտ, փորձում է հասկանալ Ան դրանիկին, որ նա այդ կերպ փորձել է արդարացնել Ղարաքիլիսայի և Սարդարապատի իր անգործությունը[11]:

Ավետիս Ահարոնյանը Ղարաքիլիսայի հերոսամարտը համարում է 20-րդ դարի Ավարայրը, երբ գերակշիռ ուժերով հարձակված թշնամին հարկադրված եղավ գնահատել հայերի անձնազոհ հերոսությունը Ղարաքիլիսայում: Բաթումի

[10] Արմեն Մարուքյան Հայոց պատմության հարցեր Երևան 2001թ. էջ 110-111
[11] Արմեն Մարուքյան Հայոց պատմության հարցեր Երևան 2001թ. էջ 118

պայմանագրի ժամանակ թուրքական պատվիրակությունը Ղարաքիլիսայի ճակատամարտը համարեց հատուկ գործ, որն իրենց ստիպեց ճանաչել Հայոց Պետականությունը:

Պայքար Զանգեզուրի համար 1920-1921թթ.

1917թ. Ռուսական կայսրության փլուզումից 1918թ.գարնանը Ռուսաստանից Անդրկովկասի անկախացումից հետո թուրք-ադրբեջանական ոտնձգությունները հայկական մի շարք տարածքների, այդ թվում Սյունիք-Զանգեզուրի նկատմամբ առավել վտանգավոր դարձան: Պանթուրքիզմի գաղափարախոսները աչալուրջ էին, նրանք գտնում էին, որ տարածաշրջանից Ռուսաստանի հեռացումով նոր հեռանկարներ են բացվում «Մեծ Թուրանի» գաղափարը իրականացնելու, դրա ճանապարհին մխրճված «հայկական սեպը» վերացնելու համար: Այդ ծրագիրը կարող էր ողբերգական դառնալ, եթե թուրքիան իր դաշնակիցներով հաղթանակած դուրս գար Առաջին համաշխարհային պատերազմից: Բարեբախտաբար, Քառյակ դաշինքը պարտություն կրեց 1918թ. հոկտեմբերի 30-ին կնքված Մուդրոսի զինադադարով Թուրքիան ստիպված էր հեռացնել իր զորքերը տարածաշրջանից, այդ թվում՝ Զանգեզուր-Ղարաբաղից: Ցավոք Անգլիական ներկայությունը որևէ դրական չէր խոստանում: 1918թ. նոյեմբերին անգլիայի Գեներալ Թոմսոնը դարձավ Բաքվի Գեներալ-նահանգապետ և նամիջապես բացահայտվեցին անգլիական շահերը և ադրբեջանամետ քաղաքականությունը, պայմանավորված Բաքվի նավթի շահութաբեր գործոնով[12]: Ակնհայտ էր, որ տարածաշրջանում անգլիայան վերահսկողության ամրապնդման դեպքում՝ Զանգեզուրը նաև՝ Ղարաբաղը տրվելու էին Ադրբեջանին: Բարեբախտաբար դա ևս տեղի չունեցավ և մինչև 1920թ.գարնան կեսերը հայ-ադրբեջանական պայքարում, հաջողությունը, կարծես, հայկական կողմինն էր:

Իրադարձությունը կտրուկ փոխվեց պայմանավորված Խորհրդային Ռուսաստանի 11-րդ Կարմիր բանակի առաջխաղացմամբ: Դրանից անմիջապես հետո 11-րդ բանակի ղեկավարությունը շտապում է վերջնագրեր ներկայացնել Հայաստանի կառավարությանը, Ղարաբաղից և Զանգեզուրից հայկական զորամիավորումները դուրս բերելու պահանջով: Ղարաբաղի հայությունը մայիսի 25-ին ընդունեց պարտադրված խորհրդայնացումը՝ դրանով իսկ դառնալով հայկական տարածքներից առաջին խորհրդայնացված շրջանը: Շուտով խորհրդային զորքերը ռազմակալեցին նաև Զանգեզուրը ու Ղարաբաղը: Այսպիսով հակառակ իր կամքին, Հայաստանը փաստացի ներքաշվում Խորհրդային Ռուսաստանի և Ադրբեջանի հեռտ չհաստատված պատերազմում:

[12] Կարեն Հ. Խաչատրյան, Հայոց պատմության հարցը Երևան 2021թ. էջ 19

Խորհրդային ուժերի կողմից Զանգեզուրում գործադրվող բռնությունները չէին դադարում:

1920թ. հունիսի 17-ին հրավիրված Կապարգողթի ներկայացուցչական ժողովում արժանապատիվ սյունեցիները որոշում են Նժդեհի գլխավորությամբ շարունակել պայքարը թրքաբոլշևիկյան ուժերի դեմ: Նժդեհը դիմում է ՀՀ ռազմական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանին ու ՀՅԴ բյուրոյին՝ պահանջելով զինական օգնություն ուղարկել Սյունիք: 1920թ. հունիսի վերջին կարմիր բանակի հետախուզական վաշտը, առաջապահ զորամասերն ու ադրբեջանական բանակի ստորաբաժանումները շարժվում են Զանգեզուր[13]:

Ռուս-ադրբեջանական ուժերը ներխուժում են Տեղ ու Խնձորեսկ, իսկ հուլիսի 5-ին՝ Գորիս: Հայկական ուժերի մի մասը նահանջում է Սիսիան, իսկ զորախմբերից մեկը՝ Կապան: Օրեր անց Գորիս ժամանած հայտնի ջարդարարներից մեկը՝ թուրք զինվորական գործիչ Խազիլ փաշան, հայտարարում է, որ երբևէ Զանգեզուրի հայությունը չճանաչի Ադրբեջանի գերիշխանությունը՝ կենթարկվի արևմտահայության ճակատագրին:

Գորիսի անկումով սկսվում է զանգեզուրյան հերոսամարտի նոր փուլը (1920թ. հուլիսի- 1921թ. հուլիս), որը գլխավորում է Կապարագողթի արծիվը՝ Գարեգին Նժդեհը: 1920թ. հուլիսի վերջին ռուս-թուրքական զորամասերի կողմից գրեթե ամբողջությամբ գրավված էր Արցախը, Սյունիքն ու Նախիջևանը, սակայն Սիսիանի, Կապանի ու Արևելքի առանձին վայրերում շարունակվում էր պայքար զավթիչների դեմ: Հայսանանի դեմ բացահայտ ագռեսիան ու հայկական երկրամասերի բռնազավթումը Մոսկվան շարունակում էր հիմնավորել հայ-թուրքական բախումները կանխելու պատճառաբանությամբ:

ՀՀ բռնազավթած տարածքներում ծայր առած սոսկալի բռնությունները, բնակավայրի ավերածությունները, թալանն ու տնտեսական քայքայումը, մարդկանց առևանգումներն ու պայքարը դարձել էին սովորական երևույթ: Հայ մտավորականության ու զինվորականության լավագույն ներկայացուցիչներին ձեռբակալում ու տեղափոխում էին Գանձակ, Շուշի ու Բաքվի բանտերը, նրանք ենթարկվում էին աննկարագրելի խոշտանգումների ու նվաստացումների:

Բազմաթիվ հայ սպաներ, զինվորներ, բժիշկներ, պետական ծառայողներ, մարտերին չմասնակցած անմեղ գյուղացիներ, առանց դատ ու դատաստանի գնդակահարվում էին:

Խորհրդային Ադրբեջանը բոլոր ուժերը կենտրոնացրել էր Զանգեզուրը Ադրբեջանին կցելու վաղեմի երազանքն իրողություն դարձնելու գործին: Խորհրդային Ադրբեջանի հակահայ քաղաքականության էությունը բնութագրող ուշագրավ փաստաթղթերից է Ադրբեջանի Հեղկոմի նախագահ Նարիման Նարիմանովի դրածո՝

[13] Արշալույս Ա. Զուրաբյան, Զանգեզուրը 1920թ. ապրիլ-օգոստոս ամիսների տարածաշրջանային զարգացումներին, էջ 212

Ղարաբաղի Հեղկոմի նախագահ Ասադ Կարանի 1920թ. հուլիսի 21-ի հույժ գաղտնի նամակը՝ Գորիսի Հեղկոմի մուսուլման անդամներին.«պատմում եմ, որ մինչև այժմ զինաթափված չէ Զանգեզուրի հայկական գյուղերի 90%-ը: Դա ցավալի է: Բայց առավել ցավալին այն է, որ մինչև օրս գլխատված չէ Զանգեզուրի հայությունը: Նրա մտավորականությունը և ռազմական պարագլուխները գտնվում են գյուղերում: Վաղը նրանք կդառնան ապստամբության ղեկավարներ և մեր ուժերը դուրս կքշեն Զանգեզուրից: Աշխատեքգիշեր-ցերեկ: Ջանացեք, որպեսզի բոլոր նշանավոր պետական հայերը կալանավորված լինեն: Ձեռք առեք օրինված միջոցներ: Այն, որ հային 3 միլիոն ռուբլի տաս, որ չբերի Աժդահ (Նժդեհի) գլուխը»[14]:

Խորհրդային Ռուսաստանը նպատակ ուներ ՀՀ տարածքով հնարավորության դեպքում երկրի հյուսիսային մասով (երկաթուղով), կապ հաստատել դաշնակից քեմալականների հետ՝ ոսկի, զորք, զենք ու զինամթերք առաքելով նրանց ինչին դեմ էր Հայաստանի կառավարությունը, որը տեղեկություն ուներ այն մասին, որ քեմալականները պատրաստվում են այդ զենքը ուղղել ՀՀ-ի դեմ:

1920թ. ամռանը բռնազավթված Սյունիքում մարտերը չէին դադարում: Այսրկովկասում դաշնակից երկրների ներկայացուցիչները մեծ ուշադրությամբ հետևում էին ծավալվող գործողություններին: Հուլիսի 19-ին Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ կապիտան Գրեյսը Երևանում հանդիպում է ՀՀ վարչապետ Համո Օհանջանյանի հետ: Վերջինս հավաստիացնում է, որ ինքը չի հավատում Մոսկվայի խոստումներին:

1920թ. հուլիսի 21-ին Թիֆլիսում հանդիպում է տեղի ունենում Կիրովի ու ՀՀ կառավարության ներկայացուցիչ Բեգզադյանի Միչև: Կիրովը պաշտոնական հայտարարություն է անում այն մասին, որ Ռուսաստանը ոչ միայն ճանաչում է Հայսատանի անկախությունը, այլև իր պարտքն է համարում օգնել հայերին: Եվ սա այն դեպքում, երբ ռուս-ադրբեջանական զինուժը ծրագրում էր նոր արշավանքներ:

Վիճակը օրհասական էր, բայց ռուս-ադրբեջանական զորամասերի դեմ շարունակում են առյուծաբար մարտնչել Նժդեհի փոքրաթիվ ուժերը: Դարալագյազ քաշված Դրոյի զորամասը հուլիսի վերջին Սիսյանի ու Գորիսի ուղղությամբ անցնում է հակահարձակման: Հայկական զորքերի առաջխաղացումը անհանգստացնում է որ միայն բոլշևիկներին, այլև՝ քեմալականներին: Ձախողվում է կարմիրների ճեղքումը Մեղրիի ուղղությամբ: Այստեղից թշնամին ցանկանում էր ճանապարհ բացել դեպի Նախիջևան, բայց Նժդեհի ուժերը հաջողությամբ կասեցնում են գրոհները՝ անառիկ պահելով Արևելյան դարպասները:

Օգոստոսի 2-ին Դրոն ազատագրում է Սիսյանի շրջանը, իսկ հաջորդ օրը Գորիսը: Նահանջից առավ բոլշևիկները Գորիսի բանտում գազանաբար խոշտանգում

[14] Արշալույս Ա. Զուրաբյան, Զանգեզուրը 1920թ. ապրիլ-օգոստոս ամիսների տարածաշրջանային զարգացումներին, էջ 219

են մի շարք պետական ու ռազմական գործիչների, այդ թվում՝ Հայաստանի խորհրդարանի անդամներ Արշակ Շիրինյանին ու Վահրամ Խորենուն:

Սակայն հաղթանակի բերկրանքը կարճ է տևում, այդ օրերին Նժդեհը գրում է, որ «Ռուսաստանը ստիպել է Հայսատանի կառավարությանը ձեռք քաշելու Զանգեզուրից, որ այդ երկիրն արդեն տրված է Ադրբեջանին[15]»:

Զանգեզուրում ընթացող բանակցությունները վերսկսվում են Թիֆլիսում օգոստոսի 10-ին, ստորագրվում է 6 հոդվածից բաղկացած հայ-ռուսական համաձայնագիրը: Խորհրդային Ռուսաստանը ճանաչում է ՀՀ անկախությունը: Ռազմական գործողությունները դադարում են: Արցախը, Սյունիքն ու Նախիջևանը մնում են Ռուսաստանի վերահսկողության տակ:

Օգոստոսի 10-ի Թիֆլիսի համաձայնագիրը օրինականացվեց Կրեմլի բռնազավթումը: Հայաստանին պարտադրվեց նաև Արցախի, Սյունիքի ու Նախիջևանի կարգավիճակի հարցը տնօրինելու Կրեմլի կամքը: Դրոն հեռագրում է Նժդեհին և գրում, որ Ռուսաստանը պահանջում է. «Նժդեհը հավաքի զորամասերը և հեռանա, իսկ Նժդեհը պատասխանում է, որ Զանգեզուրից հեռանալու մտադրություն չունի»:

Օգոստոսի 20-ին Նժդեհը նամակ է գրում Ռուբեն Տեր-Մինասյանին. «Ոչ մի զիջում, զիջումը՝ գերություն է, կոտորած ու մահ մեզ համար: Մենք, որ ապրել ենք ազատ ու հաղթական կյանքով, հպարտ ու հերոսական մահով մեռնել էլ գիտենք: Աստված և իմ տերը Հայսատանի հանրապետության հետ»:

Գարեգին Նժդեհը, որ բոլշևիկների կողմից հուլիսի սկզբին Գորիս ներխուժելուց հետո ստիպված էր իր փոքրաթիվ ուժերով քաշվել Խուստուփ, հոկտեմբերի կեսին գլխավորեց համազանգեզուրյան ապստամբությունը: Ապստամբներին ճնշելու փորձերը հաջողություն չունեցան և նոյեմբերի 21-ին ապստամբները ազատագրեցին Գորիս կենտրոնը:

Օրջոնիկիձեի նախաձեռնությամբ Խորհրդային Ադրբեջանի Հեղկոմի 1920թ. նոյեմբերի 30-ին՝ «Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախչջևանը Խորհրդային Հայաստանի հանրապետության մաս համարելու մասին» որոշմանը, ինչպես նաև 1920թ. դեկտեմբերի 2-ի Երևանի հայ-ռուսական համաձայնագրի 3-րդ հոդվածով Խորհրդային Ռուսաստանը նույնպես ճանաչել էր նախկին «Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառը» Հայաստանի կազմում, դեկտեմբերի 25-ին Սյունիքի Տաթևի վանքում հրավիրված համազանգեզուրյան համագումարում երկրամասը հռչակվում է ինքնավար՝ քանի դեռ քաղաքական իրադրությունը հնարավորություն չի ընձեռնի ՀՀ-ին միանալու համար: Սյունիք-Զանգեզուրի սպարապետ նշանակվեց Գարեգին Նժդեհը[16]:

---

[15] Արշալույս Ա. Զուրաբյան, Զանգեզուրը 1920թ. ապրիլ-օգոստոս ամիսների տարածաշրջանային զարգացումներին, էջ 222

[16] Կարեն Հ. Խաչատրյան, Հայոց պատմության հարցերը, Երևան 2021թ. էջ 25

Զանգեզուրի անկախությունը լրջորեն անհանգստացնում էր խորհրդային իշխանություններին:

1921թ. ձմռանը 11-րդ կարմիր բանակի հրամանատարությունը փորձում է բանկցությունների միջոցով հասնել Զանգեզուրի խորհրդայնացմանը: 1921թ. հունվարի 21-ին Բաքվում գրված նամակում Դրոն նշում էր, որ հարկավոր է ընդունել խորհրդայնացման առաջարկը, նա վստահեցնում էր, որ Մոսկվան կպաշտպանի հայ ժողովրդին: Ավաղ Դրոն չէր կարող կռահել, թե ինչպիսի տարածքային կորուստներ է կրելու Հայաստանը 1921թ. մարտի 16-ի Մոսկվայի ռուս-թուրքական «դավադիր գործարքով»: Մյուս կողմից՝ պետք է նշել, որ խորհրդային կողմին հաջողվեց դիմակայել թուրք-ադրբեջանական նկրտումներին Զանգեզուրի հարցում և դուրս թողնել կոնֆերանսի օրակարգից:

Նժդեհը չէր կիսում Դրոյի լավատեսական հույսերը, նա մերժում է ինչպես նրա, այնպես էլ խորհրդային պատվիրակության առաջարկությունը՝ երկրամասի խորհրդայնացումն ընդունելու մասին:

Նժդեհը շեշտում էր, որ դեմ չի Զանգեզուրի խորհրդայնացմանը, եթե խորհրդային իշխանությունը, ոչ թե խոսքով, այլ գործնականում ապացուցի իր արդար ու բարի վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ:

Նժդեհտը Զանգեզուրի խորհրդայնացման հետևյալ նախապայմաններն է առաջ քաշում.

1. Հեռացնել քեմալական զորքերը Հայաստանի շրջաններից,
2. Նախիջևանը և Լեռնային Ղարաբաղը փաստացի միացնել Հայաստանին,
3. Ազատել հայ մտավորականներին խորհրդային բանտերից:

Խորհրդային Ռուսաստանը պահանջում էր հանգիստ թողնել Զանգեզուրը և զանգեզուրցիներին:

Այսպիսով Վրաստանի խորհրդայնացումից և Հայաստանում փետրվարյան ապստամբությունը ճնշելուց հետո 1921թ. գարնանը Զանգեզուրը մնացել էր հակախորհրդային պայքարի և անկախության միակ կղզյակը ամբողջ Անդրկովկասում, իր վրա սևեռել բոլշևիկների ողջ ուշադրությունը և ռազմական ներուժը:

Ստեղծված նոր իրադրության հրամայականով Տաթևում հրավիրված համազանգեզուրյան 2-րդ համագումարը, ապրիլի 27-ին ինքնավար Սյունիքը հռչակում է «Լեռնահայաստան» և վարչապետ նշանակում Գ. Նժդեհին, որը պարգևատրվում է «Խուստուփյան արծիվ» երկաթե շքանշանով: Շատ չանցած, հունիսի 1-ին, Լեռնահայաստանը վերանվանվում է «Հայաստանի Հանրապետություն», վարչապետ է նշանակվում Սիմոն Վրացյանը, Գ. Նժդեհը ստանձնում է զինվորական նախարարի և սպարապետի պաշտոնը:

1921թ. մայիսի սկզբին Կարմիր բանակը դադարեցնում է հարձակումը, Զանգեզուրի խորհրդայնացման խնդիրը խաղաղ ճանապարհով համագործակցելու համար սկսել բանկցություններ: 1921թ. հունիսի 3-ին ընդունված՝ «Զանգեզուրը հակահեղափոխականներից մաքրելու մասին» որոշման մեջ նշվում է.

1. «Զանգեզուրը լիկվիդացնել,
2. Անցնել ռազմական գործողությունների նախապատրաստմանը,
3. Հանձնարարել Հայաստանի կառավարությանը հոչակագիր ուղարկել Զանգեզուր[17],
4. Միջոցներ ձեռնարկել Մեղրին անմիջապես գրավելու համար»:

Հուկիսի 2-ին Գորիս են մտնում Կարմիր բանակի Կովկասյան խմբերը: 1921թ. հուլիսի 13-ին Կարմիր բանակի զորամասերը մտնում են Մեղրի, Զանգեզուրի խորհրդայնացման գործընթացն ավարտված էր:

Հայաստանում գտնվելու վերջին օրերին Նժդեհը դիմում է Հայհեղկոմին մի շարք պահանջների հետ մեկտեղ նա շեշտում է, որ ադրբեջանցիները չպետք է մտնեն Զանգեզուր, վերջինս, նաև Ղարաբաղը մեկընդմիշտ պետք է լինի Հայաստանի կազմում: Զգուշացնելով, որ ինքը ընդմիշտ չի հեռանում Լեռնահայաստանից, այլ կվերադառնա, եթե «Երևանի փոխարեն Բաքուն լինի հողի վրա ոտք դնողը», Նժդեհը թողնում է Հայաստանի սահմանները և փոքրաթիվ ուժերով անցնում Արաքսի իրանական ափը:

Հայ ժողովրդի մեծ զավակ Գարեգին Նժդեհի և նրա զինակիցների գլխավորությամբ զանգեզուրցիների անհավասար, սակայն հերոսական պայքարը, ռազմավարական առումով բացառիկ նշանակություն ունեցող հայկական Զանգեզուրի մեծ մասը կազմի խորհրդային Հայաստանի անբաժան մասը, հակառակ դեպքում, նրան կարող էր սպառնալ Նախիջևանի կամ Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը:

Հայաստանի ազգային արխիվում կա մի փաստաթուղթ, որի ստեղծման տարեթիվն ու ամսաթիվը հստակ չէ: Փաստաթուղթը ձեռագիր է և անստորագիր: Ակնհայտ է, որ փաստաթղթի հեղինակն անմիջական մասնակցություն է ունեցել նկարագրվող իրադարձություններին, եղել է Նժդեհի մտերիմ զինակիցներից մեկը և ներկայացնում է ականատեսի աչքերով իրադարձությունները: Ուսումնասիրությունները թույլ է տալիս պնդել, որ փաստաթղթի հեղինակն է Աշոտ Մելիք-Մուսյանը՝ Գարեգին Նժդեհի հավատարիմ զինակիցներից մեկը:

Հեղինակը հիացմունքով է խոսում Գարեգին Նժդեհի՝ հրամանատարին և առաջնորդին բնորոշ հատկանիշների մասին՝ նրան անվանելով «Երկրորդ Դավիթ Բեկ», «Աժդահա փաշա», որի առաջնորդությամբ էլ պայմանավորված էր Զանգեզուրում տարած հաղթանակները[18]:

---

[17] Կարեն Հ. Խաչատրյան, Հայոց պատմության հարցերը, Երևան 2021թ. էջ 31

[18] Էդիկ Մինասյան Գ. Նժդեհի գործունեությունը Սյունիքում 1920-30թթ. Երևան 2021թ. էջ 171

1921թ. հուլիսի 12-ին Լեռնահայաստանը խորհրդային Հայաստանի կազմում թողնելու պաշտոնական հայտարարությունը մամուլում հրապարակվելուց հետո, համոզվելով, որ Զանգեզուրը միանալու է խորհրդային Հայաստանի կազմում Գարեգին Նժդեհը Մեղրիից անցնում է Արաքս գետը և ժամանակավորապես պատսպարվում է Իրանի Մուժումբար գյուղում, ապա անցնում է Թավրիզ[19]:

«Հայաստանից հեռանալիս հետս եմ առել Արաքսի հայկական ափում զինվորներիս կողմից զարնած վագրի մորթին. իմ միակ վարձատրությունը, Զավալ փաշայի դաշույնը.իմ միակ պատերազմական ավարը, պարտություն չտեսած Սյունյաց դրոշակը. թող դա դրվի կրծքիս վրայ, գերեզմանիս մեջ, և մի հին հայկական բառարան. իմ միակ մխիթարիչը տարագրանքի մեջ,- գրում է Նժդեհն իր կենսագրությունում, ապա ավելացնում,- ռօճիկ չեմ ստացել ողջ կյանքում: Հրաժարվել եմ օտար պետության սահմանած թոշակից: Ունեցել եմ հարուստ լինելու և ճոխ ապրելու հարուստ կատարելության, սակայն ապրել եմ իբրև ժողովրդի մարդ, համեստորեն աղքատ կոչելու աստիճան: Նյութապաշտությունը հեղափոխականի, զորականի, հայրենասերի համարել եմ մեկը մեր աշխարհի ամենամեծ պեղծություններն[20]»:

Հայտնի է, որ 1921թ. հուլիսի 24-ից սեպտեմբերի 28-ը Թավրիզում Գարեգին Նժդեհը կանգնում է ՀՅԴ Գերագույն դատական ատյանի առաջ՝մեղադրելով Սյունիքը բոլշևիկներին հանձնելու մեղքերի մեջ: Նա իր խոսքում հերքում է իր հասցեին հնչած բոլոր մեղադրանքները: Չնայած այդ ամենին՝ 1921թ. սեպտեմբերի 29-ին դատական ատյանի դատավճռով առաջարկվում է Նժդեհին հոեռացնել Դաշնակցությունից՝ «Ներկայացնելով նրա գործը կուսակցության 10-րդ ընդհանուր ժողովին»:

1922թ. մարտի վերջին Կոստանդնուպոլսի վրայով Նժդեհը ժամանում է Սոֆիա և մշտական բնակություն հաստատում Ցար Բորիսի փողոցի 92 տանը:

1923թ. ապրիլի 7-ից մայիսի 19-ը, ապա 1924թ. մոյեմբերից 1925թ. հունվարի 17-ը գումարված ՀՅԴ Վիեննայի խորհրդաժողովը և ՀՅԴ 10-րդ ընդհանուր ժողովը Նժդեհին վերականգնում են դաշնակցության մեջ:

Գարեգին Նժդեհը 1922-1944թթ. բնակվելով Բուլղարիայում (Սոֆիա) զբաղվել է քաղաքական, հասարակական և ազգային գործունեությամբ, եղել է ՀՅԴ Բալկանյան կոմիտեի անդամ:

Բացի իր ազգային, հասարակական-քաղաքական գործունեությունից Նժդեհը 1920-30-ական թթ. Սյունիքում հրապարակում է բազմաթիվ աշխատություններ, հոդվածներ, որտեղ հանգամանորեն վերլուծում է ոչ միայն Զանգեզուրում իր տարած հաղթանակների պատճառները: Դեռևս 1923թ. Բոստոնում «Հայրենիք» ամսագրում տարածվում են, «Հայոց բոլշևիկների կռիվները», «Ինչու՞ պայքարեց Լեռնահայաստանը», «Լեռնահայաստանի գոյամարտը» հոդվածաշարերը:

[19] Էդիկ Մինասյան Գ. Նժդեհի գործունեությունը Սյունիքում 1920-30թթ. Երևան 2021թ. էջ 171
[20] Էդիկ Մինասյան Գ. Նժդեհի գործունեությունը Սյունիքում 1920-30թթ. Երևան 2021թ. էջ 172

1924թ. Կահիրեում լույս տեսավ նրա «Էջեր իմ օրագրեն» աշխատությունը: 1924թ. մայիսին Թավրիզում նա զբաղվել է ազգային-հասարակական գործունեությամբ: 1926թ. Նժդեհը սկսում է հանդես գալ Սոֆիայում լույս տեսնող «Արաքս» դաշնակցական թերթում, որտեղ տպագրվում է «Բաց նամակներ հայ մտավորականությանը», շարքը: 1933թ. Ամերիկա մեկնելուց առաջ մոտ 2 ամիս գտնվել է Փարիզում, մոտ 20 ամիս ապրել է Ամերիկայում, այստեղ 1933-34թթ. աշխատել է Կարմիր Խաչի կազմակերպությունում, Նժդեհը մասնակցեց իբրև Բուլղարիայից ընտրված պատգամավոր: Նա ժողովից առաջ բարձրացրեց 3 հիմնական պահանջ.

ա) ձգտել, որ գաղութահայությունը դեռևս զինական գործոն Հայաստանի ինքնապաշտպանության գործում,

բ) կազմակերպել հայ երիտասարդ սերունդը. ապակուսակցական հողի վրա,

գ) բոլոր ուժերը կենտրոնացնել հակաթուրքական ճակատում:

Այդ նպատակների իրականացման համար 1933թ. ամռանը Նժդեհը մեկնեց ԱՄՆ: ԱՄՆ-ում Նժդեհը նախաձեռնում է Ցեղակրոն շարժումը և ստեղծում է Ցեղակրոն Ուխտերը:

Նժդեհը իր հուշերում գրում է, որ այդ կազմակերպությունը նա ստեղծել էր.

ա) պարտվողականությամբ տառապող գաղութահայությամբ հատկապես երիտասարդ հատվածին հոգեփոխելու, նրան ազգային գիտակցություն, ուժ ու վստահություն ներարկելու համար:

բ) Արևմտյան և Արևելյան Հայաստանում կատարած ցեղասպանությունը հասկանալու և թուրքերի հակահայկական քարոզչական արշավին դիմագրավելու համար,

գ) հայկական սպանդին հետևող բարոյական քայլեր, եղեռնի վարկաբեկմանը դիմադրելու համար ձեռնարկել ինքնապաշտպանական քայլեր,

դ) հայկական հին կուսակցությունների կողմից հայոց դարից հրաժարվելու և Թուրքիային մերձենալու մտայնությունը «ոչ» ասելու հայությունը «Թուրքիայից ունեցած տարածքային պահանջներին տեր դարձնելու» նպատակով:

1936թ. նոյեմբերի 15-ի նամակում գրում է. «Ես չեկա Ամերիկա ժողովրդավարություն փնտրելու, այլաշխատելու մեր ցեղի հոգու անսպառ հանքերում: Ամերիկան կռվադաշտ չէ, որ նոր բան տար ինձ,- գրում է Նժդեհը»:

Ամերիկայում նրան հաջողվեց, հակառակ շատերի չկամության, ոտքի հանել հայոց ցեղը:

Գարեգին Նժդեհը 1934թ. աշնանը վերադառնում է Սոֆիա և 1935թ. ամուսնանում է Եփրիմե Սուքիասյանի հետ[21]:

1935թ. նրա հարաբերությունները ՀՅԴ ղեկավարության հատկապես (Ռուբենի) հետ լարվեցին: 1937թ. Նժդեհը կանչվում է Կահիրե՝ որտեղ նրան փորձում են հաշտեցնել Ռուբենի հետ: Սակայն նժդեհը վերադառնում է Սոֆիա: Նժդեհն իր մասնակցությունն է բերել 1942թ-ին: 1948թ. Նժդեհը դատապարտվում է 25 տարվա բանտարկության, ժամկետը հաշվելով 1944-ից: Նրա ձերբակալությունիվ հետո ընտանիքը (կինը և զավակը) Սոֆիայից աքսորվում են Բուլղարիայի Պավրիկենի քաղաքը: 1947թ. Նժդեհը խորհրդային կառավարությանը առաջարկում է մի ծրագիր, սփյուռքում ստեղծել կազմակերպություն, որը հետագայում մտներ Խորհրդային Ռուսաստանի կազմի մեջ: 1948-1952թթ. Նժդեհը գտնվել է Վլադիմիրի բանտում, այնուհետև 1953թ. ամռանը Երևանի բանտում:

Նժդեհին նորից տեղափոխում են Վլադիմիր ուր և մահանում է 1955թ. դեկտեմբերի 21-ին:

Խորհրդային ղեկավարությունը Նժդեհին զրկեց ընդհանուր ներումից օգտվելու իրավունքից, դա այն դեպքում, երբ դրան արժանացան զգալի թվով հակախորհրդային գործիչներ:

Ստանալով բանտային վարչության հեռագիրը Նժդեհի մահվան մասին եղբայրը՝ Լևոն Տեր-Հարությունյանը, շտապ մեկնում է Վլադիմիր: Նրան հանձնում են եղբոր զգեստն ու ժամացույցը, իսկ ձեռագրերը՝ ոչ: Թույլ չի տրվում նաև մարմինը տեղափոխել Հայաստան:

Լևոնը կատարում է եղբոր թաղումը, գերեզմանը ցանկապատել տալիս ու տախտակի վրա, ռուսերեն տառերով գրել՝ «Տեր-Հարությունյան Գարեգին Եղիշեի (1886-1955)»:

Սակայն ինչպես ամեն մի իրական հերոս, Նժդեհը չմոռացվեց:

1983թ-ին Նժդեհի աճյունը գերեզմանի լուսանկարի օգնությամբ և Նժդեհի հարազատներից մեկի միջոցով Վլադիմիր քաղաքի գերեզմանատներից գաղտնի տեղափոխվում է Երևան: Նույն տարի, աճյունից մի նշխարի ամփոփվում է Խուստուփ լեռան լանջին՝ Կոզնի կոչվող Աղբյուրի մոտ, իսկ հիմնական աճյունը մի քանի տարի ցինկե արկղում պահելուց հետո, 1987թ. հանգրվանում է Գլաձորի Սպիտակավոր վանքի բակում[22]:

Իր մահից տասնամյակներ անց միայն՝ 1992թ. մարտի 30-ին նժդեհը ՀՀ դատախազության կողմից արդարացվեց ինչի կարիքը երբևէ չուներ:

---

[21] Էդիկ Մինասյան Գ. Նժդեհի գործունեությունը Սյունիքում 1920-30թթ. Երևան 2021թ. էջ 182

[22] Հայ-Արիներ պարբերականը տպագրվում է 2002թ.-ից:

Նույն ճակատագրին արժանացավ Լևոն հայրապետյանը, Գարեգին Նժդեհի քրոջ թոռնիկը:

Նժդեհի խոհերից

1. Մեռնել, բայց չտեսնել օտարի պղծիչ գարշապարը հայ երկրի վրա:
2. Հաղթում է ուժեղը, և ո՛չ արդարը:
3. Մի օր կզգաս իմ սրի կարիքը, բայց ինձ էլ չես ունենա, ապերախտ ժողովուրդ…
4. Թուրքին մեկ հանցանք ներել նշանակում է երկու նորերն արտոնել:
5. Դատապարտելի է նաև պատմական հայրենասիրությունը: Հայրենիքը պետք է սիրել անկախ իր քաղաքական ռեժիմից, ինչպես նաև անկախ մեր քաղաքական համոզմունքներից:
6. Պատմությունն անավարտ վեպ չէ, այլ չավարտված ճակատամարտ:
7. Պայքարում տեղի է տալիս այն կողմը, որի առաջնորդող տարրերը առաջինն են հուսահատվում

Եզրակացություն

Հայոց պատմության ալեծուփ օվկիանում մեր նվիրական հերոսների շարքում իբրև գաղափարական և կազմակերպական առաջնորդ, վեր է հառնում Գարեգին Նժդեհի կերպարը:

Նժդեհը մեր պատմության այն եզակի դեմքերից է, որի մեջ ներդաշնակորեն միձուլվել են զինվորականն և մտածողը, ազգային, բարոյախոսն ու քաղաքական գործիչը և որն իր՝ հիրավի պատմաստեղծ կյանքով, հաստատաբար դասվում է հայոց առաջնագույն մեծերի շարքը:

Սույն եզրակացությունը փաստում է Նժդեհի դերը: Նա այն հայ գործիչներից է, ովքեր հավերժ մտել են պատմության մեջ ժողովրդին ու Հայաստան հայրենիքին մատուցած մեծագույն ծառայությունների համար: Բավական է թեկուզ, հիշատակել նրա ղեկավարած Զանգեզուրի հերոսական ինքնապաշտպանությունը, որի շնորհիվ հայոց պատմական երկրամասը այսօր գտնվում է Հայաստանի կազմում:

Իր կյանքն ու գործունեությունը հաստատում են հետևյալ իրողությունները. ես միշտ երևան եմ եկել վտանգների ժամանակ, խաղաղության օրով պաշտպաններ չեմ փնտրել, քանիզի չեմ սիրել: Վարել եմ միշտ էլ ժողովրդավարական ուժեր: Կռիվներում եղել եմ մարդ, ավելին քան մարդ, անգամ թուրք ու թաթարների դեմ:

Հավատքի և պաշտամունքի տաճարում միշտ էլ առաջին տեղերը հատկացված են եղել Աստծուն և Հայրենիքիս: Հայաստանն է եղել երկրավոր սրբազագույնն ինձ համար: Շնչել, ապրել եմ նրանով՝ միշտ պատրաստ տառապելու, զոհաբերելու և մեռնելու նրա համար: Ռոճիկ չեմ ստացել ողջ կյանքում: Հրաժարվել եմ անգամ օտար պետության սահմանած թոշակից: ունեցելեմ հարուստ լինելու և ճոխ ապրելու կարելիություն, սակայն ապրել եմ իբրև ժողովրդի մարդ՝ համեստորեն աղքատ կողվելու աստիճան[23]:

Հայաստանից հեռանալիս հետս եմ առել Արաքսի հայկական ափում զինվորներիս կողմից զարնած վագրի մորթին. իմ միակ վարձատրությունը, Զավալ փաշայի դաշույնը.իմ միակ պատերազմական ավարը, պարտություն չտեսած Սյունյաց դրոշակը. թող դա դրվի կրծքիս վրայ, գերեզմանիս մեջ, և մի հին հայկական բառարան. իմ միակ մխիթարիչը տարագրանքի մեջ:

Գարեգին Նժդեհի առաջնորդած Սյունյաց գոյամարտի արդյունքում Խորհրդային Հայսատանի մաս կազմեց ցարական շրջանի Զանգեզուրի գավառի Արևմտյան հայաբնակ հատվածը: Այս տարածքների վրա 1921թ. օգոստոսին կազմակերպվեց ՀՍԽՀ Զանգեզուրի գավառը՝ հինգ գավառակներով:

1921թ. դեկտեմբերի 12-ին Թեհրանում ապաստանած Համո Օհանջանյանը գրել է. «Սիրելի Նժդեհ, այն ինչ տեսել եմ և գիտեմ, ինձ ոչ մի առիթչի տալու փոխելու իմ հիացմունքի վերաբերմունքը դեպի այն գործը, որ դու կատարել ես Զանգեզուրում

[23] Չխրատվող ժողովուրդ, Գ. Նժդեհ Երևան 2021թ. Վերնատուն, էջ 241

վերջին երկու տարվա ընթացքում, երբ Մայր Հայաստանի մտավորականությունն ու զինվորականությունը քո ստեղծած դրության շնորհիվ կարողացան ազատվել իսպառ բնաջինջ լինելու վտանգից[24]»:

Եթե այսօր Լեռնահայաստանը կանգուն է՝ պարտական են Գարեգին Նժդեհին և նրա զինակից ընկերների բացառիկ նվիրումին: Նժդեհի վաստակը առանձնանում է կազմակերպչական ունակություններով, գերմարդկային ջանքերի շնորհիվ պահպանվեց երկրամասի ազգային նկարագիրը և անվնաս մնաց Հայաստանի ողնաշարը:

[24] Արշալույս Ա. Զուրաբյան, Զանգեզուրը 1920թ. ապրիլ-օգոստոս ամիսների տարածաշրջանային զարգացումներին, էջ 212

Օգտագործված գրականության ցանկ

1. Չխրատվող ժողովուրդ, Գ. Նժդեհ Վերնատուն մեդիա, Երևան 2021թ.
2. Աշոտ Ա. Մելքոնյան, Սյունիքը Հայոց պետականության հոլովույթում, պատմական ակնարկ, Հայոց պատմության հարցեր, Երևան 2021թ.
3. Կարեն Հ. Խաչատրյան, Գ. Նժդեհը և Արցախահայ պետականության պահպանման հարցը, Երևան 2021թ.
4. Արմեն Ց. Մարուքյան Գարեգին Տեր-Հարությունյանի (Նժդեհ) դերը Մեծ Ղարաքիլիսայի հերոսամարտում, Երևան 2021թ .
5. Էդիկ Գ. Մինասյան Գ. Նժդեհի գործունեությունը Սյունիքում 1920-30թթ. Երևան 2021թ.
6. Արշալույս Ա. Զուրաբյան, Զանգեզուրը 1920թ. ապրիլ-օգոստոս ամիսների տարածաշրջանային զարգացումներում, Երևան 2021թ.
7. Գարեգին Նժդեհ Հայկական հանրագիտարան կայքից
8. Հայ-Արիներ պարբերականը տպագրվում է 2002թ.-ից: